Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-23/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.12.2023թ. ժամը 12:40-ին:

Հանձնաժողովի նախագահ

Վ. Պողոսյան – ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության պետ,

Հանձնաժողովի անդամներ

Ա. Մարտիրոսյան – ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Հ. Ղազարյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդ աշխատանքային օրը ժամը 12:40-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-23/8» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«ՍԱԼՈՆ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00889166, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Ադամյան 1, էլ հասցե՝ salonllc20@gmail.com, հեռ.՝ +37455550105

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ «ՍԱԼՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ (փաստաթղթի վրա երևում է ստորագրողի տվյալները, ստորագրման ժամը, բայց այն երևում է որպես պատկեր, այլ ոչ թե որպես էլեկտրոնային թվային ստորագրություն):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-23/8» ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկված գները ներկայացվում են ստորև՝

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)		
		«ՍԱԼՈՆ» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	հաճախորդների սպասարկման ծառայություններ	58,680,000	0	58,680,000

Ծառայության ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գինը կազմում է 58,680,000 ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և ծանուցել «ՍԱԼՈՆ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները՝ ներկայացնելով էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լիազորագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

6. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-23/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի դեկտեմբերի 26-ին ժամը 11:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Պողոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Մարտիրոսյան

_____ Հ. Ղազարյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան